

ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹԵՔՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ՝

ՎԵՐՆԵՐ ՎԻՆՏԵՐ (ԳՅՀ)

0. Գևորգ Զահուկյանի «Հայոց լեզվի համեմատական քերականություն»¹ աշխատության լույս ընծայումը համեմատաբանների տրամադրության տակ դրեց քաջատեղյակ ժամանակակից հայեցակետ հայոց լեզվի պատմահամեմատական ուսումնասիրության բնագավառի ինչպես լուծված, այնպես էլ դեռևս իրենց լուծումը չգտած հարցերի վերաբերյալ: Այս գրքում ամփոփված հարուստ նյութը մեծապես նպաստում է գրքի հեղինակի և այլ գիտնականների կողմից արված առաջարկների քննադատական վերաքննահատմանը: Ստորև ես կօգտագործեմ Գ. Զահուկյանի գրքից քաղած նյութը երկու, թվում է տարբեր, բայց իրականում սերտորեն կապված հարցերի ուսումնասիրության համար. դա հայերենի գոյականների և ածականների եզակի ուղղական և հայցական հոլովաձևերի և հայերենի մի շարք գոյականների եզակիի —ն ածականի ծագման հարցն է:

1. Գ. Զահուկյանի գրքում բերված աղյուսակները² հստակորեն ցուցադրում են այն լավ հայտնի փաստը, որ (անկախ զ նախդրի առկայությունից) գոյականների, ածականների և դերանունների եզակի թվում միայն առաջին և երկրորդ դեմքի դերանունների ուղղականն ու հայցականն են ձևով տարբերվում՝ ուղղ. ես, հայց. իս, ուղղ. դու, հայց. քեզ: Զահուկյանը³ միասնական բացատրություն չի փորձում առաջարկել եզակի ուղղական և հայցական հոլովների ձևական նույնության մասին: Գողելը⁴ հարց է տալիս. «Իսկապե՞ս դասական հայերենի վիճակը արդյունք է երկու հակադիր ձևերի ձուլման, թե՞ ընտրվել է ուղղականի կամ հայցականի ձևը»: Չնայած որոշ անհետևողականություններ, Գողելը հակված է երկրորդ ենթադրությանը. մի կողմից՝ նա հաստատում է, որ հայցականի ձևերը «փաստորեն կորել են ք, դ և ն ունեցող հիմքերում»⁵, մյուս կողմից՝ համոզված է, որ ձեռն, ոտն, ակն բառերը ճշգրտորեն արտացոլում են նախահնդեվրոպական հայցականի ձևերը⁶: Դժվարությունները ակնհայտ են դառնում մաքուր բառի ծագման բացատրության ժամանակ. մերթ նա նախընտրում է հայցականի *mr̥tom ձևը, ապա շրջանցում է այս կարծիքը և այն հանգեցնում ուղղականի *mr̥tos-ին՝ առանց որևէ բացատրության⁷:

Այսպիսի իրավիճակը նկատի ունենալով, հայերենի փաստերի նոր քննությունը անհրաժեշտություն է դառնում:

2. Նախ, պետք է նկատի առնել մեկ այլ լավ հայտնի փաստ. հայերենն իր ամենավաղ վկայություններում արդեն կորցրել էր սեռի հատկանիշը, որը հնդեվրոպական մյուս լեզուներում միայն մասամբ է համապատասխանում ձևաբանական տարբերակմանը: Գոյականի ածական որոշիչները, ինչպես նաև փոխադարձ դերանունները չունեն սեռային տարբերակում: Սեռային տարբե-

1 Г. Джаукян. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982.

2 Նույն տեղում, էջ 92—98, 144—146:

3 Նույն տեղում, էջ 137—138:

4 R. Godel. An introduction to the study of Classical Armenian. Wiesbaden, 1975, p. 99.

5 Նույն տեղում, էջ 101:

6 Նույն տեղում, էջ 100:

7 Նույն տեղում, էջ 101—102:

րակվածության վերացման փուլերը մասնակիորեն կարելի է վերականգնել. բավական է ասել, որ չեզոք սեռը թվում է, թե ամփոփվել է ոչ չեզոքի մեջ, բայց այնքան էլ պարզ չէ, թե արական և իգական սեռերի ձուլումը այդ ժամանակ արդեն ավարտվե՞լ էր, թե ոչ:

3. Ինչպես նշվել է վերը (1-ին կետ), կան անառարկելի տվյալներ, որ եզակիում ուղղական-հայցական հոլովները հոլովման գոնե որոշ խմբերում արտացոլում են հին ուղղականի ձևը: Այստեղ պետք է ավելացնել, որ այս երևույթը չի սահմանափակվում միայն անձ և շնչավոր առարկա ցույց տվող գոյականներով, այսինքն այն գոյականներով, որոնց ուղղականը ավելի հաճախական գործածություն ունի, քան հայցականը⁸: Օրինակներն են աստղ (հուն. *astér*), հայր (հուն. *pater*), քոյր (**swesōr*), շուն (**k'wōn*), ձիւն (հուն. *khiōn*) բառերը, թիւն (**-tiyōn*) բաղադրյալ ածանցը⁹:

4. Գոգեւր տարակուսանք է արտահայտում այն ակնհայտ փաստի կապակցությամբ, որ բառավերջի ուղղականը պետք է պահպանվի այնպիսի բառերում, ինչպիսիք են շուն կամ ձիւն և կորչի այնպիսի վերջավորության մեջ, ինչպիսին է **-ōm-ը*¹⁰: Որքանով որ հարցը հին չեզոքին է վերաբերում, կարելի է առաջ քաշել մի օժանդակ վարկած, որը կվերացնի հարցի լուծման մեջ եղած դժվարությունները: Նախքան հին չեզոք սեռի **-ō-* հիմքով գոյականների ձուլումը նրանց համապատասխան արական սեռի գոյականների հետ (կամ, եթե արական և իգական սեռի գոյականները ձուլվել էին ավելի վաղ, արական-իգականի հետ), չեզոքի **-ō-* հիմքերը համընկնում են չեզոք սեռի **-s-* հիմքերի հետ, ինչպես այդ տեղի է ունեցել սլավոնական լեզուներում. այս ձուլման հետևանքով նախահնդեվրոպական **-os-*ի արտացոլում հանդիսացող ուղղական-հայցականի վերջավորությունները նույնանում են ոչ չեզոք **-ō-* հիմքերի եզակի ուղղականի հետ:

5. Ձնայած որոշ ձևերի առկայությանը, որոնք կրնան մեկ այլ առիթով, մի կարևոր խոչընդոտ կա այն պարզ ենթադրության համար, որ հայերենում եզակի ուղղական-հայցականի բոլոր ձևերը հիմքում ունեցել են ուղղականի ձևը. այդ խոչընդոտը տեսնում ենք այնպիսի ձևերում, ինչպիսիք են ռաւ կամ ակն, եթե միայն այս ձևերը իրոք արտացոլում են հին **podm*, **ok'm* ձևերը, ինչպես ենթադրում է Գոգեւր¹¹, հետևելով Ա. Մեյլին¹²: Այս հայտարարությունը սոսկ ենթադրությունից ավելին դարձնելու համար անհրաժեշտ էր բացատրել, թե ինչու հայցականը պահպանվել է հենց այս ձևերում: Այսպիսի բացատրություն չի տրվել:

6. Գ. Ջահուկյանը -ն-ով հիմքերի հանգամանալից քննության ժամանակ¹³ նշում է, որ գոյություն ունեն -ն-ով բառերի իմաստային փակ խմբեր՝ կենդանիների, քույսերի, մարմնի մասերի, տարվա եղանակների անվանումներ, ինչպես նաև որոշ թվականներ: Շատ դեպքերում ամբողջ բառի կամ -ն-ածանցի նախահնդեվրոպական ծագումը հավանական լինել չի կարող: Ավելորդ չի լինի այստեղ կրկնել Ջահուկյանի բերած օրինակները:

7. Կենդանիների անվանումների մեջ ընդգրկվում են հետևյալ բառերը (ցուցակը բերվում է ըստ Ջահուկյանի գրքի հերթականության¹⁴). ծիծառն,

⁸ Հմմտ. W. Winter. Formal frequency and linguistic change, *Folia Linguistica* 5, 55—61.

⁹ Հմմտ. Г. Джаукян. Указ. соч., с. 104—117, R. Godel. Op. cit., p. 100—101.

¹⁰ R. Godel. Op. cit., p. 101.

¹¹ Նույն տեղում, էջ 100:

¹² A. Meillet. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique. Vienne, 1933, p. 83—84.

¹³ Г. Джаукян. Указ. соч., с. 112.

¹⁴ Նույն տեղում, էջ 112—113:

բիբեռն, ձուկն, մուկն, կոունկն, առն, գառն, եղն, եզն, խաշն, կորին, մրջին, յուն, բեղեռն, ճպտուն, ջալլամն, որդն, շառաւն, տառեխն:

Համեմատական քերականության նյութն օգնում է նույնացնելու վերը նշված բառերից առն, գառն և շուն բառերը համապատասխանաբար **-ēn* և **-on* վերջավորությամբ հին ուղղականի հետ¹⁵։ այս ձևերը հետագա բացատրությունների կարիք չունեն:

8. Բույսերի անունների խումբը ընդգրկում է հետևյալ բառերը. սիսեռն, գաղձն, դաղձն, եղեռդն, եղէզն, կաղանջանն, կոտիմն, նուռն, ոլոռն, որոմն, ոսպն, սունկն, խոլորձն: Այս բառերից երեքը՝ եղեռդն, կոտիմն, սունկն, մասին Ջահուկյանը գրում է, որ ունեն զուգահեռ՝ առանց *-ն*-ի ձևեր¹⁶։ Ինչպես հարուստ փաստերով ցույց է տալիս Ջահուկյանը, այստեղ նշված տերմիններից քչերը (եթև ալգալիսիբ կան) ունեն հավաստի հնդեվրոպական ծագում. այդ պատճառով էլ հաղիվ թե հնարավոր լինի օգտագործել դրանք *-ն*-ի ծագման վերաբերյալ որևէ վարկած հաստատելու կամ մերժելու համար:

9. Մարմնի մասեր նշանակող տերմինների ցուցակը բավական մեծ է և տպավորիչ. մուկն, արմուկն, կրուկն, ալկն, ունկն, արին, կոտն, ողն, փայծաղն, ստին, թէկն, ուլն, բուռն, գագաթն, եղունգն, կառափն, կողն, մատն, շուրթն, պնեղն, ոռնգն, տուռն, ոտն, ձեռն: Կողն բառի եզակի ուղղական հայցականի համար Ջահուկյանը նշում է զուգահեռ՝ առանց *-ն*-ի ձև¹⁷։ Մանրամասները կքննվեն ստորև:

10. Տարվա բոլոր եղանակների անուններն էլ վերջանում են *-ն*-ով. գարուն, ամառն, աշուն, ձմեռն: Չպետք է անուշադրության մատնել այն հանգամանքը, որ գարուն և աշուն մի կողմից և մյուս կողմից՝ ամառն և ձմեռն զույգերը ձևով իրար ավելի մոտ են: Մեծ հավանականություն ունի այն ենթադրությունը, որ տեղի է ունեցել համաբանություն¹⁸, բայց թե ինչ ուղղությամբ է ընթացել այդ երևույթը, կարիք ունի հետագա ուսումնասիրության:

11. Եւթն, ինն, տասն թվականները գալիս են հաստատելու, որ գոնե այս ձևերում նախահնդեվրոպական **-m-*ը և **-n-*ը Հայերենում արտացոլվել են իբրև *-ն*՝ հին **-an-*-ից (կամ **-am-*-ից և **-an-*-ից)¹⁹:

12. Վերը թվարկված ձևերը կարելի է բաժանել հետևյալ ենթախմբերի. ա) Ձևեր, որոնք հնդեվրոպական այլ լեզուներում վկայված են ունգայինով վերջացող արմատներով. դա նկատի ունենալով հայերենի *-ն*-ով հիմքերը կարելի է համարել հնդեվրոպականից ժառանգված. այդ ենթախմբի մեջ մտնում են հետևյալ բառերը՝ առն, գառն, շուն, ձին, սին, հավանաբար նաև եղն, ինչպես նաև եւթն, ինն, տասն թվականները:

բ) Ձևեր, որոնք կարող են հանգեցվել նախահնդեվրոպական տարահիմք արմատներին, որոնց ունգայինով ձևը ընդհանրացել է թեք հոլովներում: Այստեղ ամենից առաջ պետք է նշել գարուն բառը: Ջահուկյանի դիտարկումները²⁰ պետք է թեթևակի ընդլայնել և ձևափոխել: Նախահնդեվրոպական **wesr-*-ից հայերենում սպասվող ձևը իրոք **qer-*ն է (հմմտ. ձերք < **gʷesr̥u-*). *-ա*-ն պետք է համարել ումլաուտի ազդեցություն²¹: Գարուն բառը, եթե այն հին է, ենթադրում է ավելի հին **-unV-*ով ձև. որպես *-r-*ով և *-ն*-ով հիմքերի ձուլման արդյունք պետք էր սպասել **qarun-* ձևը գարուն-ի փոխարեն: Կարելի է

¹⁵ Նույն տեղում, էջ 112, 108:

¹⁶ Նույն տեղում, էջ 113:

¹⁷ Նույն տեղում, էջ 114:

¹⁸ Նույն տեղում, էջ 115—116:

¹⁹ Նույն տեղում, էջ 116, R. Godel. Op. cit., p. 100.

²⁰ Г. Д ж а у к я н. Указ. соч., с. 115—116.

²¹ Հմմտ. W. Winter. Traces of early dialectal diversity in Old Armenian.— J. Ancient Indo-European dialects, Berkeley—Los Angeles, 1966, p. 202.

արդյոք ենթադրել, որ համանուն գառն բառի հետ շփոթելուց խուսափելու նըպատակով է ստեղծվել նոր ուղղական-հայցականի ձև՝ գարուն, հիմք ունենալով հոգնակի ուղղականի գարունք, հայցականի գարունս ձևերը: Եթե այդպես է, ապա շատ հավանական է, որ աշուն բառի -ուն-ը գարուն-ի -ուն-ի աղդեցությունը լինի: Հակառակ կարծիք է հայտնել Գ. Զոլտան²²:

գ) -ն-ով ձևեր, որոնք հավաստիորեն հնդեվրոպական ծագում ունեն, բայց հ.-ն. այլ լեզուներում վկայված ձևերը չունեն ռեզային և տարահիմք հոլովման չեն ենթարկվում: Դրանք են՝ ակն, ունկն, ոտն, ձեռն, եղունգն, ար-ւունկն, խունգն, ձուկն, մուկն և մինչև այժմ այս հոգնածում չհիշատակված դուռն և մուռն բառերը:

դ) Ձևեր, որոնք զուգահեռներ չունեն հնդեվրոպական այլ լեզուներում. վերը թվարկված արմատների մեծ մասը, որոնք չեն ընդգրկված նշված ենթախմբերում:

13. Ավելի մեծ հետաքրքրություն են ներկայացնում երրորդ ենթախմբի մեջ ընդգրկված բառերը: Այստեղ կան որոշ բառեր, որոնք եղակիում ունեն -ն-, բայց հոգնակի ձևերում -ն- չկա. ակն—հոգնակի՝ աշխ, ոտն—հոգնակի՝ ոտի, ձեռն—հոգնակի՝ ձեռք, դուռն—դուռք, որի կողքին գոյություն ունի երկրորդական դուռնք ձևը²³: Ունկն բառի հոգնակին անկանոն է. այն է՝ ականգն: Այսպիսով, մենք հարկադրված ենք ենթադրելու, որ երրորդ ենթախմբում թվարկված -ն-ով բառերի գոնե մի մասը ուշ շրջանի նորագոյացություններ են:

14. Այս տեսակետը համապատասխանում է հայագիտության մեջ ընդունված տեսակետին:

Այնուամենայնիվ, պետք է նշել (5-րդ կետ), որ Մեյնի և Դոդելի բացատրությունը այս ձևերում առկա -ն-ի ծագման վերաբերյալ ունի մեկ հիմնական, թերևս անխուսափելի, թերություն. չի նշվում և հավանաբար չի էլ կարող նշվել որևէ պատճառ, թե ինչու հայցականի վերջավորությունը ընդհանրացել է հենց այս բառերում, մինչդեռ բազմաթիվ ոչ կասկածելի դեպքերում եզակի ուղղականի հետքեր պետք է արձանագրել (հմտ. 3-րդ կետ):

Քանի որ ոչ մի բացատրություն չի առաջարկվում, հարմար ենք համարում առաջարկել բուրրովին այլ մոտեցում քննարկվող ձևերի եզակիում -ն-ի առկայության և հոգնակիում բացակայության հարցի վերաբերյալ:

15. -ն- չունեցող հոգնակի ձևերը, նկատի չունենալով նրանց հոգնակի -ք- ցուցիչը, կարելի է համարել հին երկակիի ձևեր. աշ- (<*okwī < *Oekw-yē՝ կոկորդայինների տեսության համաձայն հմտ. հին եկ.-սլավ. cěl, հուն. ósse, թուր. ֆ es)՝²⁴, աս- (<*pode, հմտ. հուն. սեռ.-տր. podōin, թուր. ֆ pai-), ձեռն- (< *gʰesre, հմտ. հուն. kheire, թուր. ֆ sar-), դուր- (< *dʰure)՝²⁵:

Ձևաբանական բարդության տեսակետից երկակիի ձևերը ավելի պարզ են, քան եզակիի ձևերը. երկակիի հիմքերը ածանց չունեն, մինչդեռ եզակիի ձևերը ածած են -ն- ածանցով, և «նշույթավոր» են, այս տերմինի նեղ իմաստով, ի տարբերություն երկակիի²⁶: Հարցը ավելի պարզ պատկերացնելու հա-

²² G. Solta. De Stellung des Armenischeu im Kreise der Indogermanischen Sprachen. Wien, 1960, S. 285.

²³ Г. Джаукян. Указ. соч., с. 114.

²⁴ Šk' H. Hubschmann. Armenische Grammatik I: Armenische Etymologie. Leipzig, 1897, S. 413; W. Winter. Armenian evidence.—In: Evidence for laryngeals. The Hague—London—Paris, 1965, p. 101.

²⁵ Հնդեվրոպական այլ լեզուների բազմաշխական հին հիմքերի մասին տե՛ս H. Frisk. Griechisches etymologisches Wörterbuch 1. Heidelberg, 1960, S. 696; E. Fraenkel. Litauisches etymologisches Wörterbuch 1. Heidelberg—Göttingen, 1962, p. 112.

²⁶ Հմտ. В. Винтер. О маркированности, соответствии норме и естественно-сти.—ВЯ, 1982, № 4, с. 72—77.

մար պէտք է անդել, որ ռաւն ձևը իրոք արտահայտում է «երկու ոտքերից մեկը» իմաստով:

Այսպիսով, հայտնվում է այն տեսակետը, որ ակն, ռաւն, ձեռն, դուռն բառերում բառավերջի -ն-ն սինգուլատիվի ածանց է: Այս տեսակետը պետք է լիորձել կիրառել երրորդ ենթախմբի մյուս բառերի նկատմամբ, որոնց համար երկրորդային, ետ-նախահնդեվրոպական ընդլայնումը -ն- ածանցով կարելի է համարել ընդունելի:

16. -ն ածանցի «զույգերից մեկը» մեկնաբանությունը չի հարուցում որևէ դժվարություն ունկն, ռուկն, աւմուկն արմատների բացատրության ժամանակ: Այն հեշտությամբ կարելի է կիրառել նաև այնպիսի բառերի բացատրության ժամանակ, ինչպիսիք են կուկն, սախն, բուռն, շուրթն, պնեղն և, աննշան իմաստափոխությամբ, զույգերի շարքից մեկը նշանակող եղունգն, մատն, կողն (վերջինս ունի նաև «մարմնի կողմ» իմաստը) բառերի նկատմամբ:

Ինչպես այս ձևերի մեծ մասում²⁷ -ն-ով հիմքը չի սահմանափակվում միայն եզակիով: Գյն կարող է մեկնաբանվել նաև որպես մարմնի մասերի անվանումների շուրջի ընդհանրապես, որի հետևանքով ոչ զույգ, զույգ շունեցող միավորները կարող են ընդգրկվել այս ենթախմբի մեջ, ինչպես օրինակ՝ թէկն, ալն, փայծաղն, ուլն: Այն, որ մարմնի եզակի՝ զույգ շունեցող մասեր նշանակող այնպիսի տերմիններում, ինչպիսիք են զագաթն, կառափն, -ն-ից առաջ տեղի չի ունեցել շնչեղ-ձայնեղ հնչյունափոխություն, որ հանդիպում է ակն բառում: ցույց է տալիս, որ -ն-ի առկայությունը այդ բառերում հետագա զարգացման արդյունք է:

17. Երբ ես առաջին անգամ առաջարկեցի ակն բառի -ն-ն համարել սինգուլատիվի ածանց²⁸, ես այն չփորձեցի կիրառել երկու այլ ձևերի նկատմամբ, որոնք այժմ ընդգրկել եմ երրորդ ենթախմբի մեջ: զրանք են ձուկն ու մուկն: Մարմնի մասերի համար, ինչպես նշվեց վերը, սովորական, նորմալ երևույթ է իրական կյանքում զույգ լինելը. և այդ պատճառով անբնական չի լինի երկակի քործածությունը դիտել իբրև հիմնական, իսկ եզակին՝ ածանցյալ: Զուկ, մուկ, մրջյուն, ինչպես նաև մոծակ կենդանիների անվանումները՝ ձուկն, մուկն, մրջյուն, մուռն, հայերենում ունեն -ն-ով ընդլայնված՝ այլ լեզուներում զուգահեռներ չունեցող հիմք, իսկ կռունկ բառը հանդես է գալիս և՛ կռունկն, և՛ կռունկ²⁹ ձևերով: Այս հիմքերի կապակցությամբ կարելի է ասել հետևյալը: զրանք (նշված կենդանիները) սովորաբար չեն հանդիպում մենակ, այլ՝ խմբերով: Խմբերի մեջ մտնող առանձին անհատների քանակը կախված է կենդանիների տեսակից. և այսպիսով, այս դեպքում եզակին իբրև ածանցյալ դիտելը պակաս բնական չի թվա, քան բնականորեն զույգ մարմնի մասերի անունների դեպքում:

18. Հենց որ առաջացավ ակն ձևը, այն բունց հին՝ ընդլայնված եզակիի *af- հիմքի տեղը, ինչպես և մուկն ձևը՝ *muf-ի: Ինձ թվում է, որ 1965 թ. *muf-ի համար իմ առաջարկած բացատրությունը թույլ է տալիս պնդելու, որ -f-ն ծագել է բառավերջի կոկորդային -t³⁰ կապակցությունից: Այսպիսի ձև պետք է վերականգնել նաև հուն. ikhthûs «ձուկ» և mûs «մուկ» բառերի հիմքում ընկած ձևերի համար, այսինքն՝ եզակի ուղղականի ձևեր: Եթե այս մեկնաբանությունը ճիշտ է, ապա այն ենթադրում է, որ ուղղական-հայցականի n-ն ավելացվել էր ավարտուն հոլովաձևին: Նույնը պետք է ասել *աք-ի համար, որն արտացոլվել է իբրև ակն, բայց այստեղ, իհարկե, հին չեզոքի ուղղական-հայցականը, լուսննալույզ վերջավորություն, համընկել է արմատին:

«Ձուկն» և «մուկն» (վերջինս իհարկե բառամիջում ունեցել է հին *-Xs- համապատասխանությունը, բայց նույնիսկ այստեղ նախընտրելի է թվում *muXs < *muXs-s պարզեցված ուղղականի ձևը) բառերի համար կարելի է

²⁷ W. Winter. Armenian evidence, p. 104.

²⁸ Հմմտ. Г. Джаукян. Указ. соч., с. 112.

կարծել, որ -ն-ի հավելումը տեղի է ունեցել միայն եղակի ուղղական և հայացական հոլովների միջև եղած հակադրությունը վերանալուց հետո: Եթե այս եզրակացությունը հաստատվում է, ապա նշանակում է, որ ծուկն ու մուկն բառերը կարելի է ընդգրկել այն բառերի ցուցակում, որոնց ուղղական-հայացական ձևերն առաջացել են ուղղականից՝ մի դիտողություն, որը վերաբերում է նաև մեր թվարկած մյուս բառերին, այն է՝ շուֆ, թուֆ, փուֆ²⁹:

Ջ. Գրեպինը³⁰ չի կարողացել ըմբռնել մեր փաստարկումների հիմնական կետերը. նրա՝ ակտերնատիվ լուծում առաջարկելու փորձերը հեղհեղուկ են, և դրանք կարելի է անտեսել:

19. Զարմանալի չէ, որ սինգուլատիվի ցուցիչի կիրառությունը պարտադիր չէ: Սա ցույց է տրված -ն-ով և առանց -ն-ի ձևերի առկայությամբ որոշ գոյականների եզակիում. ապացույց՝ ծեռն և ծերք: Այս օրինակը, որում հին երկակին և հին եզակին (ոչ սինգուլատիվը) կազմում են մեկ հարացույցի մաս, պետք է նշվեր գոնե ի միջի այլոց:

Ա. Մեյեն ծունգֆ հոգնակի ձևը ծագած է համարում երկակի *g'onwi-ից³¹ (հմմտ. թուս. *keni*), մի տեսակետ, որին համակարծիք է և Զահուկյանը³²: Քանի որ, այնուամենայնիվ, նախահնդեվրոպական *-wy-ն ետձայնորդային դիրքում հայերենում արտացոլվում է իբր -շ- ողջ-ում (<*solwyo-)³³, նախընտրելի է թվում ենթադրել, որ երկակիի սովորական ցուցիչ *1<*-yE- փոխարինվել է *-e ածանցով արական սեռի բաղաձայնահանգ հիմքերում. *pode-ն ծագել է նման աղբյուրից:

Մուռ բառի եզակին բառավերջում ունի -ռ, որը հանդիպում է -ու- հիմքով գոյականների և ածականների մեջ (դրա ծագումն այստեղ չի քննարկվի). մեր առջև ականհայտորեն հին եզակիի ձև է: Զահուկյանի բերած ծունգն և ծունգ զուգահեռ ձևերը համապատասխանում են երկակի/սինգուլատիվ կաղապարին, որ քննարկվել է վերը, ծունգն-ը ուղղակի սինգուլատիվի ձև, իսկ ծունգ-ը՝ ձև, որ առաջացել է -ն-ի անկմամբ: Մուռն-ը կարող է առաջացած լինել *g'onw-Vn-ից, այսինքն *g'onu-ից, որ ընդարձակվել է սինգուլատիվի ածանցով, բայց այն կարող է ստացած լինել իր -գ-ն նաև եզակիի վրա հոգնակի ձևի ազդեցությամբ. երկրորդ տարբերակը նախընտրելի է թվում, նկատի ունենալով մուռ-ի դիմաց ծունգն ձևի առկայությունը:

20. Չնայած կարելի է վարանել ծունգֆ ձևում տեսնելու չեզոքի *-yE ցուցիչը, բայց երկակիի այս վերջավորությունը թվում է պահպանված, թեև անուղղակի ճանապարհով, մարմնի մաս նշանակող մեկ այլ տերմինի մեջ:

Ականջք բառը ամբողջությամբ անկանոն է եզակի ունկն-ի համեմատությամբ, որը կարող է բխեցվել *uhān-ից (<*usan-, հուն. *ouatos*) -կն-ի հավելումով, վերջինս՝ ակն-ի ազդեցությամբ³⁴: Մենք այժմ նպատակ չունենք քննելու ականջֆ ձևն ամբողջությամբ: Այստեղ մեզ հետաքրքրում է -ջ-ի ծագումը: Կան շատ քիչ վկայություններ³⁵, որ -ռ-ից հետո *-y-ն դառնում է -ջ-: Եթե այսպիսի զարգացում առկա է նաև մյուս ձայնորդներից հետո³⁶, ապա -ջ-ն ականջֆ-ում կարող է արտացոլել *-yE-ն -ո-ից հետո: Այս դեպքում (սա ավելին չէ, քան հավանականություն), շատ բան կախված է

²⁹ W. Winter. Armenian evidence, p. 104—105.

³⁰ J. Greppin. On the development of Armenian *nukn* and *jukn*.—REA.—N.S., 1971, 8, p. 1—4.

³¹ A. Meillet. Op. cit., p. 84.

³² Г. Д ж а у к я н. Указ. соч., с. 56, 120.

³³ Հմմտ. G. Solta. Op. cit., S. 230—232.

³⁴ Հմմտ. A. Meillet. Op. cit., p. 84.

³⁵ Հմմտ. W. Winter. Op. cit., p. 114.

³⁶ Հմմտ. R. Godel. Op. cit., p. 81, 91.

նրանից, թե ինչ է նախորդում -9f-ին, և ինչպիսին է նրա հարաբերությունը ունկն ձևի հետ. այնուամենայնիվ, այս ձևի մասին համառոտ ակնարկը թվում էր անհրաժեշտ:

21. Հայերեն -ն-ն սինգուլատիվի ածանցի հետ նույնացնելուց հետո քննարկենք նրա հնարավոր ծագման հարցը:

Կրաուզեն³⁷ համառոտակի քննում է սինգուլատիվի գործառույթը և ձևը ուելսերենում, հղելով Զ. Մորիսին³⁸, որպես իր բերած օրինակների աղբյուր: Գործառույթունը նկարագրված է ներկա հոգվածում: Այսպես, ուելսերեն adar «թռչուններ» (հին ուելսերեն atar, նախահնդեվրոպական *petro-) համարվում է սինգուլատիվի՝ «մեկ թռչուն» հիմքը, ուելսերեն aderyn, հին ուելսերեն՝ eterin: Գործածված ձևովը նույնացվում է որպես նախահնդեվրոպական *-ino--ից առաջացած:

Հավանական է թվում ենթադրել ոչ միայն գործառական զուգահեռ, այլ նաև համանման ձևական միջոցների կիրառություն հայերենում: Համոզվելու համար նշենք, որ հայ. -ն-ն իբրև այդպիսին չէր կարող ծագել նախահնդեվրոպական *-ino-ից. այն հայերենում բառավորի դիրքում կարող էր արտացոլվել իբրև -ին: Դատելով տեսականորեն, հայ. -ն-ն կարող էր լինել թեմատիկ *-ino-ի աթեմատիկ համապատասխանությունը, ինչպես այն առկա է ուելսերենում: Ինչևիցե, *-in-ը իբրև այդպիսին նախահնդեվրոպական ձևով-թի հավանական ձև չունի: Մյուս կողմից՝ *-ino-ն կարիք չկա տարրալուծել իբրև *-i-no-, ինչպես կարելի է անել. եթե փորձենք նույնացնել քննարկման առարկա *-ino-ն պատկանելություն ցույց տվող ածանցի հետ, որ հիշատակվում է. օրինակ, Բրուգմանի կողմից³⁹: Ավելին, *-in-ը կարելի է դիտել իբրև *-yen-/yon- հերթագայության զրո աստիճան, որին հետագայում ավելացել է թեմատիկ ձայնավորը:

Եզակի ուղղականի ձևերում կարող էր սպասվել *-yēn-ի կամ *-yon-ի արտացոլում: *-yōn-ի դեպքում կարելի է տեսնել բաղաձայնի քմայնացում +*-un>-ն զարգացումը. նրա *-iyōn տարբերակը ի վերջո տալիս է -ին (հմտ. 3-րդ կետ): *-yēn-ը, ինչպես կարելի է ենթադրել, նախորդ բաղաձայնի քմայնացում +*-in>-ն զարգացումը կունենա. *-iyēn-ը, հավանաբար կարտացոլվի իբրև *-iyin>*-in: Տարբերակները պետք է կանոնավորվեն Զիվերս-էդգերտոնի օրենքի համաձայն: Թվում է, թե այս կանոնները, այնուամենայնիվ, կիրառելի չեն դասական հայերենի նկատմամբ. այսպես, աբիւն-ը, «ոչ տեղին» -ին-ով հանդես է գալիս հավասարապես ոչ տեղին կորիւն-ի կողքին. և -ն-ն կարող է ընդհանրանալ ինչպես մեկ, այնպես էլ երկու բաղաձայններից հետո ընկած դիրքում:

Մեկ այլ դիտողություն ևս, այնուամենայնիվ, պետք է ավելացնել. միայն որոշ բաղաձայններ են քմայնանում *-y-ի առկայությամբ: Ինչպես դրափոխության հետևանքով կարող են առաջանալ արմատի ձայնավորման անսովոր տարբերակներ, քմայնացումն էլ, թվում է, ամբողջությամբ վերացրել է *-yēn-ի և yōn-ի արտացոլումները՝ նույնացնելով դրանք *-en-ի և on-ի արտացոլումների հետ: Ընդհանուր շփոթը, որ տիրում է հայերենում -ն-ով հիմքերի հիմքակազմության մեջ, անհուսալի է դարձնում սինգուլատիվի ածանցի նախնական ձևավորման մասին որևէ ենթադրություն անելը:

22. Բնականաբար հարց է առաջանում, թե հնդեվրոպական այլ լեզուներում, բացի ուելսերենից և հայերենից, կա՞ն գոնե հետքեր *-ino- կամ

³⁷ W. Krauze. Das Numerussystem des Tocharischen. — Nachrichten der Akademie der Wissenschaften in Göttingen, I. Philologisch-historische Klasse, № 1, S. 1.

³⁸ J. Morris. A Welsh grammar, historical and comparative. Oxford, 1913.

³⁹ K. Brugmann. Kurze vergleichende Grammatik der Indogermanischen Sprachen. Strassburg, 1904, S. 325.

*-yēn-/-yon սինգուլատիվ ածանցի։ Այս հարցին, հավանաբար, հարելի է դրական պատասխան տալ։

Թոխարական լեզաներում հանդիպում են իմաստալիկ կարգերի ձևեր՝ շատ նման 9-րդ դնում (ինչպես թոխ. Բ lymlıye «շուրթն», alyıye «ափ», paıyıe «ոտն», maşce «բուռն», paşce* «ստին», ինչպես նաև թոխ. Բ asce «գլուխ», kektseñe «մարմին») և 7-րդ կետում (ինչպես թոխ. Բ kroñkse «մեղր») նշվածներին. թոխ. Բ paıyıe «ոտն» մտել է թեթման այլ կարգի մեջ։ Այլ կնք պատճառ, այս ձևերը շատ հեշտորեն կարող են բացատրվել իբր *yēn ածանց պարունակողներ (այս դիտողությունը չի նշանակում, որ չան Վինդեկենսի⁴⁰ կողմից արված ընդհանուր առաջադրված կարելի է ընդունել)։ Շատ առարկաներից մեկը ցույց տվող եղակիի գեպը է առկա թոխ. Բ. sclıye (<*steryēn) «աստղ» բառում, որը չ.-ծ. ցեղակից լեզուների ձևերից առանձնանում է իր ածանցով⁴¹։ այնուամենայնիվ պետք է ուշադրություն դարձնել սինգուլատիվներին անորոշության ստորադասերում՝ seren (հոգն, ser) և րեհառներենում ու կոռներենում՝ sterenn (հոգն, steyr)։

23. Այսպիսով րրիաներին և թոխարներին ավյալների օժանդակությամբ հայերենի սինգուլատիվը վստահորեն կարելի է համարել նախնական, այլ ոչ թե նորաբանություն։ Սա, իհարկե, չի նշանակում, որ այս հոգովածում քրդներված առանձին ձևերը հավասարապես հին են. ինչպես կարելի է ցույց տալ, մի քանի առանձին դեպքերում սինգուլատիվի ածանցի հավելումը ուղ շրջանի երևույթ է (հմմտ. 18-րդ կեսը)։ այստեղ ընդգրկված ընդհանուր ձևերը պետք է դնահատվեն առանձին-առանձին՝ նախքան հառուկ սինգուլատիվի կազմավորումը նախահնդեվրոպականին հանդեպները։ այստեղ նույնպես ներկայական ուսումնասիրությունը նախորդում է միջլեզվային դնահատմանը։

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ АРМЯНСКОЙ ИМЕННОЙ ФЛЕКСИИ

ВЕРНЕР ВИНТЕР (ФРГ)

Резюме

В статье рассматривается происхождение форм именительного и винительного падежей единственного числа существительных, прилагательных и местоимений древнеармянского языка. В связи с этим рассматривается также конечное -n, выступающее в качестве расширителя ряда существительных в единственном числе. Выдвигается точка зрения, согласно которой в определенной группе слов—названия частей тела—-n являются сингулятивным суффиксом, следы которого наблюдаются, помимо армянского, в уэльском, брхтском и тохарских языках.

⁴⁰ A. J. van Windekens. Le tokharien confronté avec les autres langues indo-européennes 2.1: La morphologie nominale. Louvain, 1979, p. 34—38.

⁴¹ I. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch I. Bern—München, 1959, S. 1027—1028.